

Տաջիկստան

Առողջապահության բնագավառում միջկառավարական համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2017թ., հունիսի 14-ին:

Ստորագրող կողմերն են՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Տաջիկստանի Հանրապետության Կառավարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- Համատեղ գործողություններ՝ ուղղված բժշկագիտության և բժշկական տեխնոլոգիաների զարգացմանը
- Առողջապահության նյութատեխնիկական բազայի ամրապնդում
- Մասնագիտացված բժշկական հաստատությունների կողմից բժշկասանիտարական ծառայությունների տրամադրման որակի և արդյունավետության բարձրացում
- Առողջ ապրելակերպի վարման մոդելների ներդրում;
- Երկու Կողմերի պետությունների քաղաքացիների համաս հասանելիության և իրավահավասար օգտագործման պահպանում;
- Ուղիղ համագործակցություն երկու Կողմերի պետությունների հաստատությունների միջև՝ առողջապահության, դեղագործության, բժշկական տեխնիկայի և բժշկագիտության բնագավառներում;
- Համագործակցություն բժշկական կադրերի պատրաստման, վերապատրաստման, փոխադարձ հետազոտական աշխատանքների, առողջապահության, բժշկագիտության և դեղագործության բնագավառներում բժշկական աշխատանքների լավագույն ձեռքբերումների ներդրման և փորձի փոխանակման ասպարեզում;
- Օգնություն և աջակցություն երկու պետությունների գիտականներին, առողջապահության և դեղագործության աշխատողներին՝ առողջապահության, բժշկագիտության և դեղագործության բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու հարցում;
- Իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի փոխադարձ մատակարարման պայմանագրերի կնքման աջակցություն;
- Արտակարգ իրավիճակների ծագման, վարակիչ հիվանդությունների բռնկումների և անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակում;
- Դեղամիջոցների (դեղերի), բժշկական նշանակության արտադրանքի և բժշկական տեխնիկայի (բժշկական արտադրանքի), կլինիկական բիոէկվիվալենտ և այլ փորձարկումների (հետազոտությունների), նախակլինիկական ուսումնասիրությունների (հետազոտությունների),

արդյունքները, Կողմերի պետությունների տարածքներում անցկացվող դեղագործական ձեռնարկությունների, բժշկական նշանակության ապրանքներ և բժշկական տեխնիկա (բժշկական արտադրանք) արտադրող ձեռնարկությունների տեսչական ստուգումների արդյունքների ճանաչում;

- Համագումարներ, համաժողովներ և նմանատիպ այլ միջոցառումներ անցկացնելու ծրագրերի մասին տեղեկացում;